ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻԱՌԱԻՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Մերձավան համայնքի 2011թ. առաջին կիսամյակի ֆոնդային բյուջեն կազմում է 20158.6հազար դրամ.
- Համայնքի սոցիալապես անապահով 10 ընտանիքներին տրվել է դրամական օգնություն, ընդամենը 530000 դրամ.
- Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը, օգնության նպատակով, փոխանցվել է 50000 դրամ.
- Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապարտաստման կենտրոնին, աջակցելու նպատակով, փոխանցվել է 50000 դրամ.
- Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերությանը փոխանցվել է 20000 դրամ.
- Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն հասարակական կազմակերպությանը, կարկտահարված գյուղերին սոցիալական օգնություն ցուցաբերելու համար, փոխանցվել է 100000 դրամ.
- Գյուղապետարանը հովանավորել է համայնքի դպրոցի կազմակերպված 2010-2011թթ ուս-տարվա տարեվերջյան միջոցառումները.
- Համայնքի ընդհանուր դպրոցի համար գյուղապետարանը գնել է ճաշարանի արդիական կահույք՝ 977000 դրամ արժողությամբ .
- Գյուղապետարանի շենքի համար գնվել է 949000 դրամ արժողությամբ դռներ և պատուհաններ.
- Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների հուշահամալիրի վերակառուցման նպատակով գնվել է 5.304000 դրամ աժողությամբ շինարարական նյութեր.
- 2011թ.մայիսի 28-ին Սարդարապատում կազմակերպված Հայաստանի Հանրապետության Անկախությանը նվիրված մեծ միջոցառմանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև Մերձավան համայնքը, որն էլ հովանավորել է համայնքի ղեկավարը.
- Քաղաքացիների ինչպես նաև երկրագործության գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցների դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.
- 2011թ. առաջին կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 31 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 613 տեղեկանք, ստացվել է 103 պաշտոնական նամակներ, բոլորն էլ քննարկվել և ժամանակին պատասխանվել են, գումարվել է 6 ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի 3 կարգադրություններ և 18 որոշումներ.
- Կատարվել է մեկ աճուրդ, մրցույթով տրվել է մեկ հողի վարձակալություն,մեկ շինության վարձակալություն, մեկ շինության՝ անհատույց օգտագործման տրամադրում.
- ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.
- Մանկապարտեզի սաների , դպրոցականների, համայնքի մշակույթի տան ,,Բալենի,, և ,,Փայլող աստղեր,, պարային ինքնագործ խմբերի սաների կազմակերպած տարեվերջյան հանդեսները,

համերգները, նկարահանումները հովանավորել է համայնքի ղեկավարը, խմբերը մասնակցել են Սևան քաղաքում կազմակերպված պարային փառատոներին, Գյուղապետարանը նրանց համար գնել է Երևան քաղաքի մշակույթի օջախներում կազմակերպվող թատրոնների և համերգների տոմսեր,կազմակերպվել է տեղափոխումը.

- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է մարզային առաջնություններին, փնջային ֆուտբոլի մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի, մասնակցել են ՀՖՖ մասսայական Արմավիրի մարզի ֆուտբոլի միջդպրոցական առաջնությանը, 2011թ. մասնակցեցին գեներալ՝ Մանվել Գրիգորյանի գավաթի խաղարկության թիմայն մասնակցությունում գրավեցին 4-րդ տեղը: Բոլոր միջոցառումների կազմակերպման և մասնակիցների տեղափոխման ծախսերը հովանավորել է գյուղապետարանը.
- 2011թ.մայիսի 28-ին համայնքի կուլտուրայի տանը կազմակերպվել է Հայաստանի կարատեի ,,ԿԻԴՈՐՅՈՒ,, մարզաձևի բաց առաջնություն, հանայնքի մասնակից երիտասարդները գրավել են առաջավոր տեղեր՝ այդ միջոցառման կազմակերպմանը հովանավորել է նաև համայնքի ղեկավարը.
- Համայնքում գործում է ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը.
- 2011թ գարնանը կազնակերպվել է շաբաթօրյակ, մաքրվել են ոռոգման առուները , փողոցները, շենքերի բակերը : Մաքրվել է կուլտուրայի տան , մանկապարտեզի, գյուղապետարանի բակը , կատարվել է ծառատունկ.
- Համայնքի ոռոգման ջրատարի վրա տեղադրվել է 6 հատ ջրթող փականներ.
- Շաբաթական երեք անգամ համայնքուն կատարվում է աղբահանման աշխատանքներ.
- Համայնքում կարարվել է փողոցների ասֆալտի փոսալցման աշխատանքներ, վերակառուցվել է «Երիտասարդության» և «Կոմիտասի» փողոցները միացնող հատվածը՝ մոտ 100 մ.
- Հաճախակի փոխվում է գիշերային լուսավորության վառված լամպերը.
- Առաջին կիսամյակում, Մերձավան համայնքի խմելու ջրի ջրամբարին կից նորոգվել է 40 գծամետր երկարությամբ ջրագիծ, փոխվել է 6 փական.
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2011 թվականի առաջին կիսամյակում շուրջ 300 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել .
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության .
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին.

2011թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Դպրեցի վերանորոգում, լոկալ ջեռուցման անցկացում.
2. Գյուղապետարանի շենքի լոկալ ջեռուցում անցկացում.
3. Գյուղապետարանի վարչական շենքի 1/2 մասի հիմնանորոգում.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ